

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2016թ. առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

Հանրային իրազեկումը Վայոց ձորի մարզպետարանի աշխատանքային ծրագրի մաս է կազմում և կոչված է հիմնականում լուսաբանելու այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, գործընթացները և դրանց արդյունքում սպասվող ակնկալիքներն ու ձեռքբերումները:

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառնությունների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ** ԱՅԼ ԿԱՅՔԵՐՈՎ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐՈՎ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումն ապահովելու նպատակով բաժինը հաշվետու

ժամանակահատվածում համագործակցել է մարզային <<Վարդաձոր>>,

<<ԱգրոԿամուրջ>> ամսաթերթի, և <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի և Վայոց ձորի թեմի պաշտոնական կայքի հետ:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ** ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԵԶԻ <ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ> ԲԱԺՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարզպետի գործունեության հրապարակայնությանն են ուղղված եղել նաև պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնի նյութերը: 2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնում տեղադրվել են 178 լուսաբանական նյութեր, որոնք լրատվական բնույթի հաղորդումներ են:

Դրանք արտացոլել են մարզպետի աշխատանքային գործունեությունը, մարզպետի՝ մարզի տարբեր համայնքներում կատարած աշխատանքային այցերը, մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունները, մարզի համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետարանում հրավիրված քննարկումները, կրթամշակութային անցուղարձը, ինչպես նաև ՀՀ և օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի հանդիպումները հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ և այլ բնույթի աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում նշված բաժնում համապատասխան նյութերով համալրվել են <<Ելույթներ և հարցազրույցներ>>, <<Ուղերձներ>>, <<Մարզպետի պաշտոնական և աշխատանքային այցեր, ընդունելություններ>> և <<Մարզպետի տեղակալների աշխատանքային գործունեությանը վերաբերող հաղորդագրություններ>> ենթաբաժինները:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷԶԻ ԱՅԼ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Տարվա ընթացքում մշտապես թարմացվել են Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքի 23 բաժիններն իրենց 124 ենթաբաժիններով:

Հաշվետու ժամանակահատվածում պաշտոնական կայքի բաժիններում անհրաժեշտաբար բացվել են նոր ենթաբաժիններ.

<<Դիմեք մեզ>> բաժնում բացվել է՝ <<ՏԱ մասին ՀՀ օրենք, 7-րդ հոդված՝ Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը>>, <<Տեղեկատվություն ստանալու մասին հարցումների վիճակագրություն>>, <<Քաղաքացիների կողմից մարզպետարան առաքված դիմումների, բողոքների վերաբերյալ վիճակագրություն>>, <<ՀՀ ՎՁ մարզպետին և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին դիմելու ձևաթղթեր>> բաժինները,

<<Մարզպետարան>> բաժնի <<Համագործակցություն>> ենթաբաժնում նոր ենթաբաժին՝ <<Սոցիալական համագործակցություն>> վերնագրով, <<Ծրագրեր և փաստաթղթեր>> բաժնի <<Գնումներ>> ենթաբաժնում նոր ենթաբաժիններ <<Մրցութային հանձնաժողովների նիստերի արձանագրություններ>> և <<Հաշիվ ապրանքագրեր և արձանագրություններ>> վերնագրերով:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԱՍՈՒԼԻՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2015 թվականի գործունեության արդյունքների ամփոփման նվիրված մամուլի ասուլիսը կայացել է 25.12.2015 թվականին:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԶԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարանին արվել է 2 տեղեկատվական հարցում, որին պատասխան է տրվել օրենքով սահմանված ժամկետում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏՀԿ բաժին